

Հիփոթեքային վարկի համար պահանջվող փաստաթղթեր

(Ռեզիդենտներին)

Փաստաթղթերը ներկայացվում են անձամբ վարկառուի կամ համավարկառուի կողմից, դիմումը գրելուց 15 օրվա ընթացքում: Ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները, սակայն Բանկին տրվում են պատճենները:

1. Վավեր անձնագիր կամ նույնականագման քարտ

2. Եկամտի վերաբերյալ տվյալներ

- Եթե վարկառուն վարձու աշխատող է (անհրաժեշտության դեպքում).
 - Գործատուի կողմից տրամադրված աշխատավարձի տեղեկանք, որը ներառում է տվյալներ գրանցված և զուտ աշխատավարձի մասին, աշխատակցի զբաղեցրած պաշտոնը և աշխատանքային տարիների թիվը (կամ աշխատավարձի տեղեկանք ըստ ԲԲԱ-ի օրինակի)
- Եթե վարկառուն ինքնազբաղված է
 - Հարկ վճարողի հաշվառման վկայականը
 - Անհատ ձեռներեցի պետական գրանցման վկայագիրը
 - Գործունեության իրավունքը հավաստող փաստաթուղթ (եթե առկա է)
 - Գործունեության հասցեն հավաստող փաստաթուղթ (վարձակալության պայմանագրի կամ սեփականության վկայականի պատճենը)
 - Նախորդ 1 տարվա ֆինանսական հաշվետվությունները՝ հաստատված հարկային մարմինների կողմից; ընթացիկ և նախորդ տարվա հաշվեկշիռը կամ եկամտի այլ հիմնավորում
 - Եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ (գրառումներ) նախորդ 1 տարվա համար
 - Եկամտի հայտարարագրեր վերջին 2 տարվա համար
 - Բոլոր տեսակի գործող հաշիվների շրջանառության վերաբերյալ տեղեկանք՝ հաստատված համապատասխան բանկի պատասխանատու անձանց ստորագրությամբ և կնիքով (ցպահանջ)
- Եթե վարկառուն հանդիսանում է բաժնետեր
 - Պետ. ռեզիստրի կողմից տրված՝ բաժնետերերի/մասնակիցների վերաբերյալ տեղեկանք

3. Անշարժ գույքի վերաբերյալ փաստաթղթեր

- ՀՀ պետական կադաստրի Միասնական տեղեկանք, որի տրամադրման վաղեմությունը պայմանագրի նոտարական վավերացման պահին չպետք է գերազանցի 15 աշխատանքային օրը;

- ՀՀ պետական կադաստրի կողմից տրամադրված սեփականության վկայական, որը փաստում է վաճառողի սեփականության իրավունքը, պարունակում է անշարժ գույքի նկարագրությունը և գծապատկերը; Սեփականության վկայականի հիմքերը
- Գնահատման հաշվետվությունը
- Անշարժ գույքի լուսանկարները՝ տրամադրված անշարժ գույքի գնահատման գործակալության կողմից
- Առուվաճառքի պայմանագիրը
- Կանխավճարի կատարման կամ կատարման հնարավորությունը հաստատող փաստաթուղթ (հաշվի քաղվածք կամ վճարման անդորրագիր)

Կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր:

Ուշադրություն: Համավարկառուի առկայության դեպքում պետք է ներկայացվեն բոլոր այն փաստաթղթերը, որոնք պահանջվում են դիմորդից:

Հիփոթեքային վարկի համար պահանջվող փաստաթղթեր

(Ոչ ռեզիդենտներին՝ «Դեպի հայրենիք» վարկատեսակի համար դիմելիս)

Փաստաթղթերը ներկայացվում են անձամբ վարկառուի կամ համավարկառուի կողմից, դիմումը գրելուց 15 օրվա ընթացքում: Ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները, սակայն Բանկին տրվում են պատճենները:

1. Վավեր անձնագիր կամ նույնականագման քարտ

2. Կազմության և ռեզիդենտության քարտ

3. Եկամտի վերաբերյալ տվյալներ

- Եթե վարկառուն վարձու աշխատող է՝
 - Գործատուի կողմից տրամադրված աշխատավարձի տեղեկանք, որը ներառում է աշխատակցի զբաղեցրած պաշտոնը, պայմանագրի ժամկետը (առկայության դեպքում) և աշխատանքային տարիների թիվը:
 - Աշխատանքային պայմանագրի պատճենը (եթե տվյալ ընկերությունում աշխատանքային փորձը մեկ տարուց պակաս է)
 - Աշխատավարձային հաշվի քաղվածք վերջին 12 ամսվա համար
- Եթե վարկառուն ինքնազբաղված է
 - Ձեռնարկատիրական գործունեությունը հավաստող քաղվածք վերջին 12 ամսվա համար
 - Նախորդ 2 տարվա ֆինանսական հաշվետվությունները՝ հաստատված հարկային մարմինների կամ անկախ աուդիտորական ընկերության կողմից
 - Ընկերության կանոնադրության պատճենը
 - Ընկերության/անհատ ձեռներեցի պետական գրանցման վկայական
 - Գործունեության իրավունքը հավաստող փաստաթուղթ (եթե առկա է)
 - Գործունեության հասցեն հավաստող փաստաթուղթ (վարձակալության պայմանագրի կամ սեփականության վկայականի պատճենը)

- Հարկ վճարողի հաշվառման վկայականը
- Եթե վարկառու հանդիսանում է բաժնետեր
 - Պետ. ռեզիստրի կողմից տրված տեղեկանք

4. Տվյալներ վարկային պատմության վերաբերյալ

- Վարկային ցուցանիշ կամ վարկային հաշվետվություն՝ տրված ֆինանսական հաստատության կամ լիազորված մարմնի կողմից:

5. Անշարժ գույքի վերաբերյալ փաստաթղթեր

- ՀՀ պետական կադաստրի Միասնական տեղեկանք, որի տրամադրման վաղեմությունը պայմանագրի նոտարական վավերացման պահին չպետք է գերազանցի 15 աշխատանքային օրը;
- ՀՀ պետական կադաստրի կողմից տրամադրված սեփականության վկայական, որը փաստում է վաճառողի սեփականության իրավունքը, պարունակում է անշարժ գույքի նկարագրությունը և գծապատկերը; Սեփականության վկայականի հիմքերը
- Գնահատման հաշվետվությունը

Կարող են պահանջվել նաև լրացուցիչ փաստաթղթեր:

Ուշադրություն: Համավարկառուի առկայության դեպքում պետք է ներկայացվեն բոլոր այն փաստաթղթերը, որոնք պահանջվում են դիմորդից:

Ազգային հիփոթեքային ընկերության ծրագրերով տրամադրվող ձեռքբերման, վերանորոգման, կառուցման վարկերի համար պահանջվող փաստաթղթեր (Ռեզիդենտներին)

Փաստաթղթերը ներկայացվում են անձամբ վարկառուի կամ համավարկառուի կողմից, դիմումը գրելուց 15 օրվա ընթացքում: Ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները, սակայն Բանկին տրվում են պատճենները:

1. Վարկառուի հնքնություն

- Վարկառուի անձնագիրը կամ փոխարինող փաստաթուղթ
- Վարկառուի սոցիալական քարտը (առկայության դեպքում)
- Ամուսնության վկայականը (առկայության դեպքում)
- Երեխաների ծննդյան վկայականները (առկայության դեպքում)

2. Տվյալներ եկամուտների մասին՝

- Եթե վարկառուն վարձու աշխատող է.

- Եկամուտների մասին տեղեկանք գործատուից, որտեղ նշվում է վարկառուի զբաղեցրած պաշտոնը, աշխատանքային ստաժը տվյալ կազմակերպությունում և ամսական եկամտի չափը
 - Տվյալներ նախկին զբաղվածության մասին՝ գործատուն, զբաղեցրած պաշտոնը, յուրաքանչյուր կազմակերպությունում աշխատանքի ստաժը (պահանջվում է միայն այն դեպքում, եթե վարկառուի աշխատանքային ստաժը ընթացիկ աշխատավայրում փոքր է 12 ամսից),
 - Տվյալներ այլ եկամուտների վերաբերյալ (առկայության դեպքում)
 - Վարկառուի ամուսնացած լինելու դեպքում ամուսնու/կնոջ եկամուտների մասին տեղեկանք (ոչ պարտադիր)
- Եթե Վարկառուն ինքնազբաղված է.
 - Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)
 - Գրանցման վկայական, կանոնադրություն (առկայության դեպքում)
 - Գործունեության տվյալ տեսակով զբաղվելու թույլտվության փաստաթղթերը, եթե օրենսդրության համաձայն տվյալ գործունեության համար անհրաժեշտ է համապատասխան մարմինների կողմից հատուկ թույլտվություն
 - Վերջին 1 տարվա ֆինանսական և հարկային հաշվետվությունները՝ հաստատված հարկային մարմինների կողմից
 - Վերջին 12 ամսվա եկամուտների և ծախսերի հաշվետվությունները/գրառումները (առկայության դեպքում): Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ տվյալ աշխատավայրը հանդիսանում է վարկառուի/համավարկառուի առաջին աշխատավայրը և վերջինիս աշխատանքային ստաժը փոքր է 12 ամսից:

3. Անշարժ գույքի վերաբերյալ փաստաթղթեր

- Գրավադրվող անշարժ գույքի/հողամասի սեփականության իրավունքի գրանցման վկայական
- Միասնական տեղեկանք
- Գնահատման հաշվետվություն
- Գրավադրվող գույքի վերանորոգման/կառուցապատման նախահաշիվ և շինթույլտվություն

Նշում. Էներգաարդյունավետ վերանորոգման միկրովարկերի դեպքում գործատուից տեղեկանք ներկայացնելու անհրաժեշտություն չկա:

Ուշադրություն. Համավարկառուի առկայության դեպքում պետք է ներկայացվեն բոլոր այն փաստաթղթերը, որոնք պահանջվում են դիմորդից: